

Ակադեմիկոս Չրաչիկ Սիմոնյանի ելույթը

Հատված

պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու համար Արմեն Այվազյանի՝ «Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում» ատենախոսության հրապարակային պաշտպանության առիթով ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող 004 մասնագիտական խորհրդում
2003թ. դեկտեմբերի 9-ին կայացած նիստի սղագրությունից

«Շուրջ 14 տարի ղեկավարել եմ պաշտպանության խորհրդի աշխատանքներ: 30 տարի, մի քիչ ավել կամ պակաս, եղել եմ Պատմության ինստիտուտի պաշտպանության խորհրդի անդամ: Ժամանակին եղել եմ նաև [Երևանի պետական] համալսարանի պաշտպանության խորհրդի անդամ: Բայց առաջին անգամ եմ տեսնում, որ պաշտպանության ներկայացվում է դիսերտացիոն աշխատանք՝ հայցելու համար գիտական աստիճան, որին տրվում են տրամագծորեն հակառակ կարծիքներ:

Պաշտպանության ներկայացված աշխատությունը ստեղծվել է շատ տարիների՝ 10-15 տարիների ընթացքում: Աշխատության մասին շատ բարձր կարծիք ունեն Սատենադարանը, ակադեմիկոս Զուլալյանը, որ այդ ժամանակաշրջանի խոշոր մասնագետներից է: Պրոֆեսոր Դիլոյանը, որին ես շատ հարգում եմ, նույնպես բարձր է գնահատել աշխատանքը, ինչպես նաև հայ եկեղեցու տաղանդավոր երիտասարդ ուսումնասիրող պրոֆեսոր Դանիելյանը:

Պատմության ինստիտուտի տրադիցիաներից մեկն է եղել, որ երբ բաժիններում քննարկում են դիսերտացիոն աշխատանք, ապա անպայման հեղինակին կանչում են, հատկապես եթե շատ են դիտողությունները: Բայց այս դեպքում դիսերտանտը նույնիսկ տեղյակ էլ չի եղել, թե ի՞նչ են գրում, ինչպե՞ս են գրում: Երբեմն այդ աշխատանքը տևել է ամիսներ, որից հետո այդ աշխատությունները ներկայացվում են պաշտպանության՝ վերջնական տեսքի

բերելուց հետո: Բայց բացառություն է կազմել Ա. Այվազյանի աշխատության քննարկման ընթացքը, և, փաստորեն, այդ տրադիցիան այստեղ չի աշխատել. [Միջին դարերի] բաժինը ներկայացրել է մի կարծիք, որտեղ, փաստորեն, 40-ից ավելի դիտողություններ կան: Ես կարծում եմ, որ լավ կլիներ դիտողությունները հասցվելին 5-6-ի, հիմնական, առանցքային խնդիրներ առաջ քաշվելին: Եվ դա ավելի սուլիդ կլիներ:

Ինչ վերաբերում է ԵՊՀ «Հայոց պատմության ամբիոնի»-ն, ես վշտացած եմ ամբիոնի կարծիքի համար, որովհետև այսպիսի ցածրորակ, ցածր «պրոբի» կարծիքը, ցավով եմ նշում, պատիվ չի բերում ո՛չ ամբիոնին, և ո՛չ էլ որևէ մեկին: Ինչպե՞ս կարելի է շոշափել սեփական արժանապատվությունը: Ամբիոնի կարծիքում արված են դատողություններ միայն, չկան փաստեր: Իսկ դատողությունով միթե՞ կարելի է եզրակացություններ անել: Պատմությունը հենվում է փաստերի վրա, դրա համար էլ ասում են պատմությունը ճշգրիտ գիտություն է: Իսկ դատողությունը պատմագիտական կատեգորիա չէ, այլ տրամաբանության կատեգորիա: Կարելի է տրամաբանել, դատողություններ կարելի է անել: Ասենք՝ դաշնակցականները մայիսյան ապստամբությունը համարում են դավաճանություն, բուլշևիկները՝ ապստամբությունը դիտում են որպես հայ ժողովրդի փրկության փորձ: Այսինքն՝ նույն փաստից միանգամայն տրամագծորեն կարծիքներ են տրվում, այսինքն՝ դատողությունը հեշտությամբ կուսակցականացվում է, բայց պատմության համար փաստերն են կարևոր:

Քվեարկության արդյունքների մասին: 9 կողմ և 1 ձեռնպահ՝ այսպիսինն է պատկերը համալսարանի ամբիոնի տված կարծիքում: Գիտենք, որ ամբիոնում սովորաբար 2-3 հոգի են կարդում: Երեք հոգի էլ չէ, երկու հոգի են կարդում: Եղ ինչպե՞ս եղավ, որ 2 հոգու կարդացածով՝ 9 հոգի ներկայացրել են կարծիք: Երբեք ամբիոնում դիսերտացիաներին տված որևէ կարծիքի վրա թիվ չենք գրել, թիվ չենք նշել, որովհետև մտածել ենք, որ մեկը մասնագետ է, մյուսն այդ հարցով չի զբաղվել և ներկայացրել ենք որպես ամբիոնի կարծիք: Բայց երբ դուք գրում եք 9 հոգի կողմ թիվը, նշանակում է՝ ինչ-որ ստախանովյան հարվածային աշխատանքով՝ «պատասխան Չենբեռլենին»: Պատասխան եք տվել՝ միահամու՛ռ, միաձու՛րլ, էսպես երկաթյա դիսցիպլինայով կարծիք եք գրել: Կլինի՞ր բա էդպես:

Ո՞վ չգիտե, որ Ա. Այվազյանի նկատմամբ այս նեգատիվ վերաբերմունքի պատճառը նրա հայտնի աշխատությունն է, որտեղ իրավացիորեն մերկացված, քննադատված են մեր ժողովրդի պատմության կեղծարարությունները, որի պատճառով շատերի «անդորրն» է խանգարվել թե՛ այստեղ, թե՛ սփյուռքում: Ո՞վ չգիտե այդ մասին: Բայց այդ գիրքը վերաբերում է մեր ժամանակաշրջանին: Ա. Այվազյանը հարց է բարձրացրել ամերիկյան մեր ժամանակների հայագիտության մասին: Բայց նրա դիսերտացիան վերաբերում է 18-րդ դարին: Ի՞նչ հիմունքներով, բարոյական ի՞նչ սկզբունքներով են նախորդ աշխատության շուրջ ստեղծված իրենց բացասական զգացմունքերը տարածում այս աշխատության վրա: Կարելի՞ է այդպիսի բան, ընկեր Չարությունյան: Ինչպես հասարակական ամեն մի երևույթ ունի իր դրական ու բացասական կողմերը, ամեն մի անձնավորություն ևս չի կարող միայն բացարձակ դրական կամ բացարձակ բացասական կերպար լինել: Բայց ստացվում է, որ, ըստ ձեր կարծիքի, Ա. Այվազյանը լիովին բացասական կերպար է: Այդպես է ներկայացված:

Բայց ո՞վ է Ա. Այվազյանը: 8 մենագրության հեղինակ: Տեղյակ են, որ զուգահեռաբար նա աշխատում է ևս 2 աշխատության վրա, որոնցից մեկը կոչվում է՝ «Հայկական զորքի պատմություն՝ վաղնջական ժամանակներից մինչև 18-րդ դարի վերջը»: Այսպիսով 2 տարի հետո նա կունենա 10 մենագրություն: Մաքուր տիրապետում է 3 լեզվի. գերազանց հայերեն տիրապետում է, գերազանց, փայլուն տիրապետում է ռուսերենի և նույնքան՝ անգլերենի: Անգլերենով գրում է ավելի լավ...

Տեղից ակադ. Մ. Զուլայանը ավելացնում է. «Գրաբարն էլ է գերազանց: Այդ էլ ասեք»:

Չ. Սիմոնյանը պատասխանում է. «Այո՛, և գրաբարը» ու շարունակում:

Անգլերենով գրում է ավելի լավ, քան ռուսերեն, ռուսերենով գրում է ավելի լավ, քան անգլերեն, և ունի փայլուն գրիչ: Աշխարհի շուրջ 15 համալսարաններ նրան հրավիրել են դասախոսությունների: Վերջերս դասախոսել է Էդինբուրգի համալսարանում, Լոնդոնում և այլուր: 2-3 տարի է, ինչ Մոսկվայում հանդի-

պում են Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի պատվիրակները՝ քննարկելու Ղարաբաղյան հարցը: Ա. Այվազյանն այդ խմբի մեջ է: Եվ, իմ ստացած տեղեկություններով, իրեն դրսևորում է շատ բարձր մակարդակով: Ես նրան կողմ եմ քվեարկելու, որովհետև ես հպարտանում եմ, որ մենք ունենք իր նման երիտասարդ, այսքան երիտասարդ և այսքան բարձր գիտելիքների տեր, այսքան ամուր կամք ունեցող երիտասարդ: Եվ կան երևի այսպիսիները, գուցե ես չեմ ճանաչում, բայց չի կարող, որ չլինեն այդպիսիք մեզանում, որոնք և (ակադեմիկոս Մ. Զուլալյանը ճիշտ նկատեց) մեր պատմագիտության ապագան են, նրանց ձեռքում է գտնվում ապագան:

Ես նույնիսկ կոչ չեմ անում իմ գործընկերներին՝ քվեարկել հոգուտ կամ չքվեարկել: Ուղղակի ես կուզեի, որ նրանք քվեարկեն խղճի մտքը և իրենց այդ խղճի պարտամուրհակը պինդ բռնեն ձեռքում»: